# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3450-Ա « 09 » սեպտեմբերի 2024 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-ԻՆ ՏՐՎԱԾ ԹԻՎ 01/50-02-921-24 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները.

1. Երևանի քաղաքապետի կողմից 2024 թվականի մայիսի 30-ին տրված 01/50-02-921-24 շինարարության թույլտվության 2.1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«

**2.1. Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը՝**

| | |
|---|---|
| √ | **ավարտական ակտի տրամադրումից** *(շինության ավարտի պետական գրանցման հաջորդ օրվանից)* **6** **ամսվա ընթացքում.** *(նշել շահագործման թույլտվության ձևակերպման ժամկետը)* |

*(սույն տողը նշվում ու լրացվում է նոր կառուցվող բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի դեպքում )*

| | |
|---|---|
| | **ավարտական ակտի տրամադրման օրը:** *(սույն տողը նշվում է ավարտական ակտի և շահագործման թույլտվության ստացման ժամկետը նույնը լինելու դեպքում)* |

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ստանալու հաջորդ օրը: Սույն որոշման գործողությունը տարածվում է 2024 թվականի մայիսի 30-ից ծագած հարաբերությունների վրա:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

5. Սույն որոշման կատարման հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**